VISA ՔԱՐՏԵՐՈՎ ԱՐՇԱՎԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Սույնով սահմանվում են «Ֆասթ Բանկ» ՓԲԸ կողմից (այսուհետ՝ Բանկ) **20.12.2025-31.01.2026թթ. ներառյալ Visa քարտապան (այսուհետ՝ Քարտ) հաճախորդների** (այսուհետ Հաճախորդ) համար առաջարկվող արշավի (այսուհետ՝ Արշավ) պայմանները:

2. Արշավին կարող են մասնակցել Ֆասթ Բանկի բոլոր Visa Քարտապան հաճախորդները, ովքեր **20.12.2025-31.01.2026** ժամանակահատվածում ձեռք կբերեն Visa վճարահաշվարկային համակարգի քարտերից որևէ մեկը՝ Visa Digital, Visa Classic, Visa Gold, Visa Infinite, Visa Infinite Metal և կակտիվացնեն ձեռք բերված քարտերը:

3. Արշավի շրջանակներում տրամադրվում են հետևյալ նվերներն ըստ նշված հերթականության՝

№	Նվերների ցանկ	Նվերների քանակ
1	iPhone 17 Pro 256GB	5 հատ
2	Apple Watch Series 11	3 հատ
3	AirPods Pro 3 MFHP4ZE/A	3 հատ
4	Dyson HS08	2 հատ
5	PlayStation PS5 Slim	1 հատ
6	AirPods 4	1 հատ
Ընդամենը		15 մրցանակ

4. Հաճախորդը մասնակցում է Արշավին սահմանված պայմաններին համապատասխանող բոլոր քարտերի համար ստացած պրոմոկոդերի միջոցով, որոնք տրամադրվում են արշավի ավարտից հետ 15-օրյա ժամկետում Քարտապանի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին:

5. Յուրաքանչյուր հաճախորդ կարող է հաղթել միայն մեկ նվեր: Եթե միևնույն հաճախորդի քարտերը պատահականությամբ մեկից ավել անգամ ընտրվում են ծրագրի կողմից, ապա հաճախորդը ստանում է առաջին նվերը, իսկ նույն

հաճախորդի մյուս քարտի ընտրությունը չեղյալ է համարվում և իրականացվում է նոր ընտրություն:

Արշավի ամփոփում

1. Արշավի ամփոփումը կիրականացվի Բանկի YouTube-յան պաշտոնական էջում՝ ուղիղ եթերում: Նվերների ընտրությունը տեղի կունենա Արշավի ավարտից հետո՝ փետրվարի 27-ին, ժամը՝ 15:00-ին: Հաղթողները կորոշվեն easypromosapp.com համակարգով, որտեղ հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով Քարտապաններին Բանկի կողմից նախապես ուղարկված պրոմոկոդերից:
2. Պատահականության սկզբունքով համակարգի կողմից ընտրված պրոմոկոդերից բացի կընտրվի ևս 5 պահեստային պրոմոկոդ, որոնք կօգտագործվեն ըստ հերթականության այն դեպքում, երբ հաղթող մասնակիցներից որևէ մեկի հետ հնարավոր չի լինի կապ հաստատել կամ կհրաժարվի նվերից:
3. Բանկը 48 ժամվա ընթացքում առնվազն 3 անգամ կփորձի կապ հաստատել հաղթող մասնակցի հետ՝ Բանկում մասնակցի կողմից տրամադրված հեռախոսահամարով:
4. Քարտը Արշավի ամփոփման ժամանակ պետք է լինի «Ակտիվ» կարգավիճակով:
5. Արշավի ամփոփումից հետո հաղթող մասնակիցների նույնականացնող պրոմոկոդերը կհրապարակվեն Բանկի սոց. հարթակների պաշտոնական էջերում:
6. Այն դեպքում, երբ հաճախորդի հետ 1-ին կետով սահմանված ժամկետում չի ստացվում կապ հաստատել կամ հաղթող հաճախորդը 15 օրացույցային օրվա ընթացքում չի մոտենում նվերն ստանալու համար, ապա տվյալ նվերը փոխանցվում է պահուստային պրոմոկոդերի հաճախորդներին՝ ըստ պրոկոկոդի ընտրման հերթականության:
7. Բանկը հաղթող մասնակիցներին նվերի փոխարեն գումարային փոխհատուցում չի տրամադրում և նվերը չի փոխարինում այլ նվերով:
8. Հաղթող ճանաչված մասնակիցների նվերները կարող են տրամադրվել երրորդ անձանց նոտարական վավերականությամբ տրամադրված լիազորագրի հիման վրա:

9. Արշավին կարող են մասնակցել 18 տարին լրացած Քարտապանները՝ բացառությամբ Բանկի աշխատակիցների և Բանկի հետ փոխկապակցված անձանց:

ՆԵՐՍԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

«ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ